

Հարանց ոչ զոր ծնանեն և ծնելոցն ոչ որ դաստիարակէ զնսունդ օրինացն։ Բաժանման և վարատման նպատակներին աչքի առաջ ունենալով՝ ընդունում հովուաց ցրուեալ ճապաղեցարս ասում է՝ մոլորականք և թափառեալք ի լերինս պաշտարեկք և վիրաւորք ի գայլոց։ Երբ ասումս վնասակարս և մահաբերս ճարակեալ պակասեալք և անքնակ ի գալար վայրէ ի սուրբ գրոց վարդապետութենէ՝ ի հանգրստարար ջրոյ անսնունդ, ի փարախոյ ժողովարանէ արտաբոյ՝ և ոչ գոյ թեղ հովիւ որ իրկին գործեօք հովուէ։ Ունելով ի ձեռին ցուպ և գաւազան, ցպով ընդ գաղանթն մարտնչել և գաւազանաւ զխաչինսն ուղղել։» Հայոց Եկեղեցու այն ժամանակուայ լծը՝ շուստութեան այս պատկերին աւելի ոյժ տալու համար՝ Երզնկացին յիշում է և այն ողբալի վիճակը որ Հայոց մարմնական ճոխութիւններն օտարները տարան և հայ ժողովրդին գերի վարեցին։ Բայց այս ամէնը մտաբերելով հանդերձ՝ Երզնկացին բազմաւոր է ճանաչում Հայոց Եկեղեցին։ «Ի մեծն և ի գլխաւորական բարինս երանելի ես և յոյժ խնդալի ասում է նա՝ վասն զի ուղղափառ հաւատոյ լոյս ոչ նուազեցաւ։ աղբիւր յստակ աւանդութեանց քոց աղտաղտուկ ջուր օտարոտի ուսմանց ոչ պղտորեաց։ Եւ ասի անբիժ հաւատոյն և յարծաթ լուսատեսիլ բանին պղինձ ժանտահոտ և կապար սևաթոյր ոչ գտաւ։ Եւ այս բարեխառնութեան պատճառ և օժանդակ է հռչակում նա Ս. Գրիգոր Լուսաւորչին որ է «գլուխ ամենայն բարեաց և հիմն կենաց յաւիտեանականաց»։ *

Եթէ մի անգամ ուշադրութիւն դարձնենք մեր ազգի ընդհանուր վիճակի վերայ դանազան կողմերում մենք կը տեսնենք, որ նիւթապէս այս կամ այն առաւելութիւնը կամ պակասութիւնը մէկի թողած՝ բարոյապէս կամ հոգեպէս ամէն տեղ Հայերը մի կապով են կապուած իրար հետ։ Մենք կասեմք՝ այդ կապը Ս. Լուսաւորչի անունն է։ Ս. Լուսաւորչի Աջն է որ միացնում կապում է բոլորին մի լծոտի հետ և մի և նոյն սրբութեան յօգով։ Հեռու արևմուտքում արդէն խորթացած լեհաստանցի Հայերի մէջ անգամ որոնք հայկական ամէն բանը մոռացած են, դեռ պահում են Ս. Լուսաւորչի պատկերը, դեռ տօնում են Լուսաւորչի տօնը, դեռ ամէն ինչ որ «Լատինաց մէջ չկայ և Հայոց յատուկ է» զայն Լուսաւորչի կը սեփականեն։ Դեռ պատահական հայ ուղեւոր տեսնելիս երբ իրենց բուն հայրենակիցներին բարեւ են ուղարկում՝ «Լուսաւորչի պատրիարքին ձեռքը կը պահեն» ասում են և իր օրհնութիւնը կը հայցեմ մանա-

ւանդ ուրիշ Լուսաւորչի մայրապետաց բարենք տարէք» կրկնում են։ Հայազգի օտարացած մայրապետի մէկը «վզէն կուրծքին վերայ կախուած» Գրիգոր Լուսաւորչի պատկերը պահելով, սկսաւ լայն գրում է մի ուղեւոր և սրտին խորէն հառաչանք մ'արձակելով, ըսաւ. Մենք Հայու երկրէն եկած ենք, հոս կը կորինք... Գրիգոր Լուսաւորչի շարականներն ամենուն պարտքն է որ սովորին ու կարգան և այլն։ Այն Հայերը, որոնք այսպէս օտարացած են համարուում արտաքուստ նորա դեռ պահում են իրենց մէջ Ս. Լուսաւորչի անունը նուիրուած մատուռներ, խորաններ, եկեղեցիք, նորատօն կատարելիս նախատօնակին բոլոր ժողովրդով երգում են նորան նուիրուած հայերէն շարականները։ *

Այսպիսի անհուն ազդեցութեան շնորհիւ անշուշտ կը յարատեւ միշտ Ս. Լուսաւորչի զօրւոր Աջը որ դարեր շարունակ այդպէս կապած պահել է Հայոց սրտերն իրար հետ, ամէն ժամանակ, նոյն զօրութիւնը ցոյց տալով, կը ժողովէ իւր հոգեւոր զաւակներին «մի և միակրօն» հօտ կազմելու և բաժանման ու վարատման վտանգներից զերծ պահելու մի բազմաշարքար նահատակ ժողովուրդ։

Կ. Կ.



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ՝

ԵԱԹՈՂՈՅ ՆԵՐՆԵՐՈՅ.

— Անգլիոյ մայրաքաղաքում շինուող մայր եկեղեցու համար Ֆէնտոն եպիսկոպոսն ժողովարարութեան ելնելով շրջում է Եւրոպայում և Լեոն ժ.Գ. պապը 25,000 ֆրանկ է նուիրել իւր կողմից։ Այս հանգանակութեան դրամներից տղամարդկանց նուէրները պիտի յատկացնուին ս. սեղանը զարդարելու, իսկ կանանց նուէրները ս. Աստուածածնի մատուռը կառուցանելու համար։

— Հռովմում վախճանուեց նշանաւոր ծիրանաւորներից Լուդովիկոս Գալիմբերտին, որ շատերի կարծիքով պապութեան թեկնածուներից մէկն էր։ Գալիմբերտին ծնուել է Հռովմում 1826-ին, ապրիլի 26-ին, կրթուել է Հռովմի Ալլէքսանդրական մօտ եւ նոյն քաղաքի հոգեւոր դպրոցն, իսկ 1858-ին ստացել է դիտնական աստուածաբանի աստիճան, այնուհետեւ հասնելով պատմութեան և աստ-

* Յով. Երզնկացի, Ներքող. Սոփ. Հայկ. Ե.:

* Ալեքանդր Սր. Տեղեկագրութիւն Հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-վալաքիա, Հունգարիա եւ Լեհաստան։ 1877 Փոքշան։

ուածարանութեան ղոկտորի աստիճանին՝ կարգուել է ուսուցիչ պրոպագանդայի գործողութիւն և ապա համալսարանում Լևոն ԺԳ. պապի գահ բարձրանալուց յետոյ եպիսկոպոսացաւ և խորհրդականի պաշտօն սկսաւ վարել վատիկանում 1882 թուին սկսած հրապարակախօսութեան նուիրուեցաւ և հիմնեց *Moniteur de Rom* լրագիրն, Հրապարակախօսութիւնից քաջուելով նշանակուեցաւ արտաքոյ կարգի եկեղեցական գործերի վարիչ և մասնաւորապէս անուն հանեց Սարովինեան կղզիների վեճի ժամանակ, 1887 թուին Գալիմբերտին պապի կողմից ուղարկուեց Բեռլին Վիլհէլմ Ա-ի 90-ամիայ ծննդեան տօնախմբութիւնը շնորհաւորելու, Այս յանձնարարութիւնը կատարելուց յետոյ Գալիմբերտին նշանակուեցաւ առաքելական ներկայացուցիչ Վեննայում, 1893 թ. ծիրանաւորութեան աստիճանին հասաւ նա և քիչ ժամանակից յետոյ Հռոմ վանդուելով կարգուեց քահանայապետական հին թղթերի դիւանի կառավարիչ և անգամ ծիրանաւորների ժողովի, Հանգուցեալը 28-երորդ ծիրանաւորն էր ըստ կարգի ձեռնադրութեան:

— Վաթիկական տարեգրութեան մէջ կարգում ենք հ. Հարմետանի մի նոր նամակը մայիսի 6-ից, ուր նկարագրելով հայ քրիստոնեաների անտանելի վիճակը կրկին օգնութիւն է խնդրում յօգուտ այդ թշուառ հալածուածների:

— Նոյն շաբաթաթերթի մէջ հաղորդուած է, որ Ֆրանսիական նաւային ընկերութեան Վոնգո նաւով Ատորիքից Վ. Պոլիս եկած հայերին թուրք աստիկանութիւնը ձերբակալել կամենալով յարձակումն է դործել նաւի վրայ, բայց յետ է մղուել և առիթ է տուել Ֆրանսիական դեսպանութեան բողոքին:

— Ֆրանսիական կաթոլիկ թերթը հետեւեալ դժգոհութեան տողերն է գրում հասարակապետութեան նախագահի մասին. «Պ. Ֆ. Ֆօրն, որ իւր ի Տուրէն կատարած ուղևորութեան միջոցին մտքովը չէր անցկացրել մեր եկեղեցիքն այցելելու, Փարիզ հասածին պէս շտապեց ներկայ լինելու Դաբի փողոցի եկեղեցու (ռուսաց) պաշտօնին»:

— Լևոն ԺԳ. պապն առանձին եռանդով աշխատում է անգլիկան եկեղեցու միութեան մասին, այդ միութեան կուսակից անգլիացիներից նշանաւոր է լորդ Հալիֆարսը, որին համակիր է և Գլադստըն, որ պապին մի ընդարձակ հետազոտութիւն է ներկայացրել անգլիկան եկեղեցու ձեռնադրութեան ընդունելի լինելու մասին, Այս ձեռնադրութեան խնդրի մասին մի գիտնական յանձնաժողով է կազմուած Հռոմում, որի աշխատանքներին ինքը պապն

է վերահսկում եկեղեցեաց միութեան մասին Լևոն ԺԳ. պատրաստում է իւր երրորդ մեծ կոնգակը, որ կը հրատարակուի յունիսի ընթացքում:

— Հունգարիոյ հազարամեկի առթիւ պապն երեք շրջաբերական է ուղարկել այդ երկրի եպիսկոպոսներին, որոնց մէջ աշխատում է ապացուցանել, որ Հունգարիան իր բարգաւաճումն կաթոլիկ եկեղեցուն է պարտական:

— Իտալական ազատամիտները խիստ վրդովուած են այն պատճառով, որ Լևոն ԺԳ. պապը յատուկ պատուիրակութիւն է ուղարկել Հարէշներին Մենելիկ թագաւորին, Պատուիրակն է եղիպտական պատրիարք Մակարիոս եպիսկոպոսը, որ տանում է պապի ինքնաձեռագիր նամակը Հարէշների թագաւորին, որից պապը խնդրում է քրիստոնեական անվրէժխնդիր ոգւով վարուել և Իտալացի դերիներին ազատել:

ՀԱՅ ՆԱԹՈՂԻԿ ԵՎ ԵԿԵՂԵՍԻ

Հայ կաթոլիկութեան և նրա պատրիարքութեան պատմութիւնն ու ներկայ վիճակը նկարագրելով Ֆրանսիական «կաթոլիկական տարեգրութիւնը» տալիս է բաւական շատ տեղեկութիւններ, որ կարող են հետաքրքրել և «Արարատի» ընթերցողներին, ուստի և քաղուածօրէն հաղորդում ենք այդ տեղեկութիւնները, Վաթիկիկ թերթը վերջացնելով իւր գունաւորեալ պատմութիւնը, ուր ճգնում է հայոց կաթոլիկոսութիւնը պապին հպատակ ցոյց տալ, հասնում է մինչև 1740 թուականը, որտեղից իսկապէս հաշուում է նա Վ. Պոլսոյ հայ կաթոլիկ պատրիարքութիւնն կամ Վիլիկիոյ կաթոլիկոսութեան սկիզբն, Այդ թուականից մինչև մեր օրերը հետեւեալ պատրիարքների ցուցակն է դնում:

- ա. 1740. Արքահայր Արծիւեան կամ Պետրոս Ա. Արքահայր:
- բ. 1750. Պետրոս Բ. Յակովբոս վարդապետ:
- գ. 1754. Պետրոս Գ. Միքայէլ:
- դ. 1781. Պետրոս Դ. Բարսեղ:
- ե. 1788. Պետրոս Ե. Գրիգոր:
- զ. 1815. Պետրոս Զ. Գրիգոր:
- է. 1842. Պետրոս Է. Յակովբոս:
- ը. 1844. Պետրոս Ը. Միքայէլ Տէր Աստուածատուրեան:
- թ. 1867. Պետրոս Թ. Հասուն, ծիրանաւոր 1880:
- ժ. 1884. Պետրոս Ժ. Ազարեան:

Հայ կաթոլիկների նախկին պատրիարքները նստում էին Լիւբանսի Բզոմէր վանքում և նրանց թեմն էր գլխաւորաբար Վիլիկիան և Ատորիքը. սկսած 1827-ից նրանք ճանաչուեցան պաշտօ-

նապէս և 1830-ին հիմնուեցաւ Կ. Պոլսի պատրիարքութիւնը, 1850 թուականին Ճանաչուեցան Բըրուսայի, Էրզրումի, Տրապիզոնի, Անկիւրիոյ և Արգուինի թեմերը, իսկ 1868-ին Քարբէրդինը, Մնացեալ թեմերի հաստատութեան տարեթուերն են.

Ադանայինը 1827-ին, Հալէպինը 1835-ին, Մարդինինը (արքեպիսկոպոսութիւն) և Մարաշինը 1842-ին, Եգիպտոսի Ալէքսանդրիայինը (արքեպիսկոպոսութիւն), Կեսարիայինը 1858-ին, Մալաթիայինը 1861-ին, Մուշինը 1882-ին, 1890 թուականից սկսած Էրզրումի, Անկիւրիոյ, Սվազ—Բոխասթի, Հալէպ և Դիարբէքի թեմերը կոչուեցան արքեպիսկոպոսական թեմեր:

Հայ կաթողիկոսների թիւն մեր դարում շատ աճեց, մինչ 1830-ին նրանց ընդհանուր թիւն էր 30,000, այսօր հաշուում են մերձաւորապէս 118,000 հայ կաթողիկ, Տաճկաստանի Պարսկաստանի և Կովկասի սահմաններում:

Տաճիկ տէրութիւնն այժմ ճանաչում է հայ կաթողիկ համայնքն ու սուլթանի բէրութիւն է, որ հաստատուում է Կ. Պոլսի պատրիարքը, արքեպիսկոպոսներն ու եպիսկոպոսներն հաստատուում են Ֆիրմանով և կոչուում են մուրաքթաս, այսինքն՝ պատուիրակ, պատրիարքական փոխանորդներն ևս Ֆիրմանով են հաստատուում և կոչուում են մուրաքթաս — վելիկի, Կաթողիկ թերթը աշխարհիս երեսի լոյրը հայ կաթողիկոսների թիւը հասցնում է մինչև 180,000 հոգու:

Բողոքական հայերի թիւն 69,000 հաշուելով հայաստանեայց եկեղեցուն հաւատարմներին 1,739,000 հոգի է համարում Օսմանեան կայսերութեան մէջ, ուր սրանց յարաբերութիւնը մահմեդական բնակիչների հետ հետեւեալ տոկոսներով է յայտնում. Բաղէում 130,000 հայ և 250,000 մահմեդական, այսինքն $\frac{1}{3}$, բոլոր բնակիչների, Վանում հայերը 21%, են կազմում, Էրզրումում 20%, Սվազում 17%, Դիարբէքիում 15%, Քարբէրդում 12%, Անկիւրիայում 10%, Տրապիզոնում 4%, Ադանայում 60%:

Հայ կաթողիկոսների եկեղեցական վարչութիւնն ունի 18 թեմ և հինգ պատրիարքական փոխանորդութիւն, սրանցից 2 թեմ գուրս են Օսմանեան սահմաններից. Արգուինի թեմը (12,000 հաւատացեալ) Ռուսաստանումն է, իսկ Սպահանի թեմը 2000 հաւատացեալով Պարսկաստանում:

Տաճկաստանի 16 թեմերը սղբա են.

1. Պատրիարքական թեմ՝ Կ. Պոլսոյ, 10,000 ժողովուրդով, գրեթէ ամէնքն էլ Կ. Պոլսում:

Բնակուող, ունի 70 քահանայ, 14 եկեղեցի և մատուռ Կ. Պոլսում և 2 եկեղեցի Ասիայում:

2. Բրուսայի թեմը գտնուում է Խուզա՝ վնդիքեար վիլայէտում, ունի 4,000 ժողովուրդ, որոնք բաժանուած են 7 բնակավայրերում, առաջնորդը նստում է Քեօթահայում:

3. Անկիւրիոյ թեմը գտնուում է Անկիւրիոյ վիլայէտի մեծագոյն մասում, Ղոնիայում և Կաստամունիում: 11,000 ժողովուրդով, Անկիւրիայում կայ մի միջնակարգ դպրոց, որ կառավարում են քրիստոնեայ դպրոցների եղբայրները:

4. Կեսարիայի (Ղայսերի) թեմը բռնում է Անկիւրիոյ և Ղոնիոյ վիլայէտի հարաւային մասերն, չը նայելով իւր տարածութեան մեծութեան, միայն 4000 ժողովուրդ ունի:

5. Տրապիզոնի թեմը 5000 ժողովուրդ ունի, որ բնակում են նոյն վիլայէտում և Ամասիայումն ու Մուրսուանում:

6. Էրզրումի թեմը կազմում է նոյն վիլայէտի միայն մի մասը, ունի 10,000 ժողովուրդ, որ Էրզրումի Սանջակի հիւսիսային կողմումն են ապրում, Շորերս հիմնուած 30-ի շառի քարոզութիւնները (mission), ուր գործում են 40 քահանայք, պատմաւ են եղել շատերին դաւանաւորիս աւելու ևւ աւելի ևւս քաղմաթիւ դաւանաւորիս խոստանում են խոստանում. քրիստոնեայ դպրոցների եղբայր մի ծաղկեալ վարժարան ունին Էրզրումում:

7. Սվազի ևւ Թոխաթի առաջնորդութիւնք միացրած են, այս տեղ է յիսուսեանների հայկական քարոզչութեան կենդրոնը, ժողովուրդի թիւն է 6000, բայց աճում է, հէնց նորերս մի գիւղ 350 տնից քաղկացած կաթողիկ է դարձել:

8. Քարբէրդի կամ՝ Դիարբէքի թեմը գտնուում է Դիարբէքի վիլայէտի հիւսիսում և Մամուրէտ—էլ—Ազիզում, ունի 6000 ժողովուրդ:

9. Վանի և Բիթլիսի վիլայէտները կազմում են Մշոյ թեմը, որ 1882 թուից միացրած է Էրզրումի թեմի հետ, այս թեմն էլ ունի 6000 ժողովուրդ:

10. Մալաթիոյ կամ՝ Մելիտինէի թեմը գտնուում է Մամուրէտ—էլ—Ազիզ վիլայէտում, կաթողիկոսների թիւն սկսում է աճել, որովհետեւ ամբողջ գիւղեր կաթողիկանում են, առաջ ունէր 4000 ժողովուրդ:

11. Դիարբէքի թեմը գտնուում է այն

վիլայեթի արևմտեան կողմում և ունի 5000 ժողովուրդ:

12. Մարդինի թեմն ունի 10,000 ժողովուրդ և ամփոփում է իւր մէջ Դիարբէքի ռեւոսուլի վիլայեթներն:

13. Հալէպի թեմ՝ 9,000 ժողովուրդ:

14. Մարաշի թեմ՝ 8,000 ժողովուրդ:

15. Ադանայի թեմ՝ 3,000 ժողովուրդ:

16. Ալէքսանդրիոյ թեմ (եգիպտոս) ունի

2000 ժողովուրդ Ալէքսանդրիայում և Կահիրէում:

Պատրիարքական հինգ փոխանորդութիւնները գտնուում են Երուսաղէմում, Ձմիւռնիայում, Բագդատում, Դամասկոսում, Բէյրութում և Դայր—էլ—Չորում: որոնցից ոչ մէկն էլ 1000-ի չափ ժողովուրդ չունի:

Հայ կաթողիկ քահանայից թիւն է 340, որոնք կրթուած են երկու հոգեւոր դպրոցներում, որոնց մէկը Կ. Պոլսումն է, միւսը Լիւբանանի Բըզումմար վանքում: Ընտրեալ հոգեւորականները կրթութիւն են հռոմէական թէ Պրոպագանդայում և թէ հայկական դպրանոցում: և Փարիզում Սէն Սուլպիսում և կաթողիկ համալսարանում:

Բացի աշխարհական քահանաներից կաթողիկ հոգեւորականների մէջ կան և վանական կրօնաւորներ Անտօնեան և Մխիթարեան միաբանութիւններից, 1843 թ. սկսած Հասունի ջանքերով հիմնուած է և կոյսերի մի միաբանութիւն, որոնց կենդրոնը Կ. Պոլսին է, սրանք իրենց նուիրել են կրթութեան գործին:

Կաթողիկ ժողովուրդական դպրոցների թիւն է 60, ունին չորս միջնակարգ վարժարան Մխիթարեանների ղեկավարութեան տակ և մի պատրիարքական Լեկէոն Ս. Գրիգոր Լուսաւորչի անուամբն: Հայ կաթողիկ կրդերին մեծ աջակցութիւն են ցոյց տալիս կրօնաւորները, որոնք Փոքր Ասիայի բոլոր քաղաքներում տարածուած են և դպրոցներ ունեն: Փրանսիացի եղուհիտները հաստատուած են Մարսուանում, Ամասիայում, Թոխատում, Սփաղում, Կեսարիայում և Ադանայում, այս բոլոր քաղաքներումն էլ վարժարաններ ունին սրանք, նոյն տեղերում Փրանսիացի կոյսերը աղջկանց դպրոցներ են պահում, ուր քրիստոնեայ մանկուկնք դաստիարակում են առանց դաւանութեան խտրութեան:

Կաթողիկ հայերի յարաբերական թիւն միւս հայերի վերաբերութեամբ, ըստ բնակավայրերի հետեւելն է. Հալէպում հայ կաթողիկների և լուսաւորչականի թիւը գրեթէ հաւասար են միմեանց, Դիարբէքիւրում 6 հային մի կաթողիկ է գալիս և

գանայում 7-ին մէկը, Անկիւրիայում 9-ին մէկը, Էրզրումում 10-ին մէկը, Սփաղում 12-ին մէկը, Տրապիզոնում 22-ին մէկը, Քարրերդում 31-ին մէկը, Բիթլիսում 32-ին մէկը, Վանում 80-ին մէկը, Սրանից հետեւում է, որ բուն Հայաստանում կաթողիկութիւնն յաջողութիւն չունի մինչ հեռաւոր գաղութներում և Կիլիկիայում նա բաւական աշխարհակալութիւն է արել:

ՕՐԹՈՂՈՒՔՍ ԵԿԵՂԵՑԻ.

ՏՈՆՋԵՐԱՅԱՆ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹՅԱՆ.

— 2ր նայելով Անթիմոս պատրիարքի միջամշտութեան և պետութիւնների խորհրդներին՝ Կրետացիք ապստամբեցին և այժմ չեքէզ Արդուլլահ փաշան իւր թրքական բաշիրոզուկների և կանոնաւոր զօրքի բանակով սկսել են ընկճել նրանց, Առայժմ ապստամբներն յաջողութիւններ են ունեցել և կղզին հռչակել են յունական թագաւորութեան մասն: Սովորական թրքական կոտորածներն սկսուել են. խաղաղ գիւղերի և գաւառերի բնակիչները սրախողխող են լինում թուրք բաշիրոզուկներից, գերերջանիկ Անթիմոս պատրիարքն յիշում է անշուշտ անցեալ տարւան հոկտեմբեր—դեկտեմբերի արհաւիրքները Հայաստանում և իր անձին եղած պատիւները:

ՌՈՒՄԱՆԱՅԱՆ ԵՅԵՂԵՑԻ

— Ռումանական եկեղեցու խաղաղութիւնն ևս վրդովուել է, երկրի կառավարութիւնն անցնելով աղատամիտ — Ռուսաստանների ձեռքը, Ռումանիոյ Մետրոպոլիտ Գեննագիոսի թշնամիք ոյժ են ստացել և կառավարութեան աջակցութեամբ կամենում են նրան վայր գլորել իւր գահից, Գեննագիոս մետրոպոլիտն ընտրուած է պահպանողական կուսակցութեան միջոցով, իսկ այժմեան կառավարութիւնն հաշտ չէ նորա հետ, ուստի կրթութեան պաշտօնէի հրաւիրանօք ժողովուել է ուումանեան սինօզն, որ 12 անգամ ունի, սրանցից 3 են միայն Մետրոպոլիտին կուսակից, Սինօզը զատաստանի տակ է ձգել մետրոպոլիտն և վճռել է զրկել նորան բոլոր պատիւներից ու պաշտօններից ու փակել մի վանքում: «Կէօնի լրագրի» թղթակցի ասելով այս ամէնը հետեւանք է քաղաքական խարդաւանաւորի, որ պարզ երևում է եղած մեղադրութիւններից իսկ, Գեննագիոսին մեղադրում են իրրն ընչասէր, սիմոնիական և ծիսական նորամուծութեանց հեղինակ, ապացոյց են բերում, որ Գեննագիոսը առաջնորդ եղած միջոցին 400 եկեղեցի է օծել և այդ միայն նորա համար, որ աջահամբոյններ ստանայ, Յիրաւի

որ ձիւնից սպիտակ լինելն: անգամ չէ ազատում
դրապարութեան բծից: Եվ կարող էր գուշակել, որ
Աստուծոյ տներ բազմացնելն ևս յանցանք է եղել:

ԲՈՂԱՐԱՆԱՆ ԾԵՆՂԵԾԻ.

— Մակեդոնիայում գրգռմունքները շարու-
նակուում են: յեղափոխականները գոհ չեն նոր
բարեփոխութեան ծրագիրներից: Ազգիւրում յոյն
ժողովուրդը գրգռուել է բողոքների գէմ եկեղե-
ցում աղմուկներ է հանել սլաւերէն պատարագը
խանգարելու համար: Բողոքը առաջնորդը փակել է
եկեղեցին և դիմել է տաճիկ կառավարութեան ա-
ջակցութեան:

ԲՈՂԱՆԱՆ ԾԵՆՂԵԾԻ.

— Բազադրութեան փառաւոր հանդէսներից
յետոյ կայսերական շնորհներին արժանացան բացի
աշխարհական պաշտօնեաներից և օտար ներկայացու-
ցիչներից ևս և բոլոր ուսու հոգեւորականները մետ-
րոպոլիտներից սկսած մինչև քահանաները: Այս
առաջին անգամն է, որ թագադրութեան հանդիսի
առթիւ շքանշաններ շնորհուեցան նաև օտարազա-
ւան և այլակրօն հոգեւորականներին: որ ցարդ սո-
վորութիւն չէր այս առթիւ հայ եկեղեցականնե-
րից կայսերական շնորհներին արժանացածների ցան-
կըն արդէն իսկ հրատարակեցինք խախընթաց հա-
մարում:

— Վերջին ժամանակներս ուսուաց մամուլի
մէջ խղճի ազատութեան մասին առանձին
կերպով է խօսուում: աչքի ընկնող երևոյթն է, որ
այս նուագ խղճի ազատութիւն է պահանջուում և
ուսու աղանդաւորների համար: Լրագրական քննու-
թեան առարկոյ եղաւ այս խնդրին այն օրուանից,
երբ իշխան Աւետմանու թերթը պաշտպան կանգ-
նեց հարաւ արևմտեան կաթոլիկներին: որոնք ա-
ռանձին ճշման տակ են գտնուում լեհական ապրա-
տամբութիւնից սկսած: Այս պաշտպանութիւնը
առիթ տուաւ Վոլոյէ Վրէմիային պաշտպան կանգ-
նել ուսու աղանդաւորներին: որոնք զրկուած էին
թագադրութեան ուրախ տօներին հեռու մնալ բո-
ւոր հանդէսներից: մինչ բուրգայական լամաներն
անգամ մասնակցում էին թագադրութեան հանդի-
սին: Ամենից աւելի առաջ գնաց այդ խնդրում
Վեդլիայ շարաթաթերթը: որ անպայման խղճի
ազատութեան կուսակից է և այժման օրէնսդրու-
թիւնը կիսատ է համարում: Արտասահմանեան կը-
րօնական թերթերն ևս խօսեցին այդ խնդրի առթիւ
և յատկապէս լուտերական թերթերը գոհութիւն
յայտնեցին: որ Հուլիսիան երկիրներում այլևս
յաճախ չեն պատուօրներ զատերն ու դատա-

պարտութիւններին և դատապարտեալներին ներումն
է շնորհուում հրովարտակով: Առանձին աչքի է ըն-
կել և ուսու մետրոպոլիտի այն ճառը թագադրու-
թեան միջոցին: որի մէջ ոչ մի կերպ անհարկու-
թիւն չը կայ այլ դաւանութիւնների մասին:

Ինչպէս արտասահմանեան թերթերից մին հա-
ղորդեց, այդ ամէնի պատճառն է նորին Մեծու-
թիւն Նիկոլայ Բ. Վասսը: որ խղճի կատարեալ ա-
զատութեան տիրապետութիւն է ցանկանում Ռու-
սիայում:

— Հարաւ արևմտեան նահանգներում օրթո-
դոքս քարոզութեան նպաստում է և այն հանգա-
մանը: որ վերջին ժամանակներս առանձին խը-
նամք է տարուում խառն ամուսնութիւններից ծըն-
ուած որդիների կրթութեան համար:

— Ս. Սինոդի հրամանաւ պիտի գրագիտու-
թեան դպրոցներ բացուին բոլոր ծխական եկեղե-
ցիներին կից առանց ուշադրութիւն դարձնելու այն
հանգամանքի վրայ թէ կան այն տեղերում աշխար-
հական և հոգեւորական ուսումնարաններ:

ԸՆԴՀԱՆՈՒՄ ԾԵՆՂԵԾԻ.

— „Allg. Evang. Lath. Zeit. № 23. հաղորդում
է, որ Լեոն ԺԳ. պապի նշանակած յանձնաժողովը,
որ պիտի քննէր անգլիկան եկեղեցու ձեռնադրու-
թեան ընդունելութեան խնդիրն: արդէն աւարտել է
իւր աշխատանքն և յանգել է բացասական եզրա-
կացութեան: ուրեմն կաթոլիկներն անվաւեր և ա-
ռաքելական շնորհից զուրկ պիտի համարեն անգլի-
կան եկեղեցու ձեռնադրութիւնը: Այս եզրակա-
ցութեանը սպասում էին և անգլիացիք: որոնց
ստուար մեծամասնութիւնը հակառակ է պապական
միութեան գաղափարին:

— Անգլիացիք միջին Ափրիկէում մեծ յա-
ջողութեամբ կռուում են գերեվաճառութեան դէմ
ու այս տարուան կռիւների մասին հրատարակած
կապոյտ գրքից կարելի է այն եզրակացութեան
գալ, որ միջին Ափրիկէում գերեվաճառութեան
հետ նրանք կը վերջացնեն և այն արարներին ու
տեղացի գլխապետներին: որոնք այդ ստոր գործով
են պարապում:

— Անգլիացի եկեղեցականներն անգույ եռան-
դով շարունակում են հաւածուած հայերի մասին
քարոզութիւն: աղօթքներ և ժողովարարութիւն-
ներ են տեղի ունենում միացեալ թագաւորութեան
համայնքներում: Անգլիայի եկեղեցականների այս
ընթացքը մի կատարեալ հակապատկեր է անգլիա-
կան կառավարութեան շահանդիւր ընթացքին:

ԲՈՂՈՔԱՅԱՆ ԵԿԵՂԵՑԻ.

ԳԵՐՄԱՆԻԱ.

— Այս տեղ հոգեգալուստն այնպէս չէ տօնուում, ինչպէս Գերմանիայում: հոգեգալուստն ընդհանուր ժողովրդական տօն է Գերմանիայում: Առ հասարակ բոլոր դպրոցական հաստատութիւններն այդ տօնի առթիւ երկարատեւ արձակուրդներ են ունենում: ամառային արձակուրդներն այնտեղ հոգեգալստեանն են սկսում: Հանգստութեան և ազատութեան օրերը Գերմանիայում գիտեն սակայն օգտակար կերպով տօնել, բոլոր ընկերութիւններն այդ տօներին են կազմում իրենց համաժողովներն և իբրեւ կենդանի ընտրում են ամենայն տարի մի նոր ժողովատեղի, որով և առիթ են տալիս իրենց անդամներին դիւրութեամբ ծանապարհորդելու: Սովորաբար ամեն մի քաղաք առանձին պատիւ է համարում մի ժողով հիւրասիրել, ուստի երկաթուղիներն իջեցնում են ուղևորութեան գները, քաղաքները հիւրանոցներ են վարձում, հանգեսներ են կազմում, մասնաւոր քաղաքացիք քաղցրութեամբ հիւրընկալում են ժողովների անդամներին և ամենայն կերպ դիւրացնում են իրենց հիւրերի կեանքը:

Այս տարի հոգեգայտեան տօներին աւետարանական—սոցեալականների տարեկան ժողովը տեղի ունեցաւ Հոռուտգարտում, Համբուրգում ժողովրդական դպրոցների ուսուցիչների և ուսուցչուհիների ժողովը, Ախէնում միջազգային բանուորների ժողով, կանանց ժողովը Կասսելում: պատմաբանների ժողովն Բրեմսնում էլն: Առանձին ուշադրութեան արժանի էր աւետարանական—սոցեալականներէ VII, ժողովն Հոռուտգարտում որ ինչպէս սպասուում էր շատ բազմամարդ և բազմադիրն էր: Ամէնքին հետաքրքրում էր Վիլհելմ կայսեր այդ ընկերութեան դէմ ուղղած հեռագրի քննութիւնն:

Աւետարանական ընկերավարների նպատակների և կազմակերպութեան մասին երկարօրէն գրուել է անցեալ տարուան Արարատում ուստի մեր ընթերցողները ծանօթ են այդ շարժման հետ: որ այժմ մեծ ընդարձակութիւն է ստանում ամբողջ Գերմանիայում ժողովին մասնակցում էին շատ անուանի պրօֆեսորներ և եկեղեցականներ, բացակայ էր միայն այդ շարժման պարագլուխ Հեռակերը, որ կայսեր հեռագրից անձնապէս վերաւորուած, բարեւը էր համարել հեռանլու ժողովից: Կարճատես քաղաքագետները կարծում էին, որ կայսեր հեռագիրը կը սպանէ աւետարանական ընկերավարների շարժումն, սակայն Հոռուտգարտի ժողովն հակա-

ռակն ապացուցեց, ժողովին մասնակցել են բանուորների ընկերութեան ներկայացուցիչներ, որոնց ուղարկող ընկերութեանց անդամների թիւն 52,000-ի է հասնում:

Հոռուտգարտի Կոնգրէսը նախ և առաջ պաշտպան հանդիսացաւ Հեռակերին, նրա հասցէին ուղղուեցան քաջալերիչ հեռագիրներ:

Յայտնի պատուր Կառմանը մի զեկուցագիր կարդաց, որի մէջ աւետարանական բանուորների ընկերութեանց կազմակերպութեան մասին էր խօսում, այս զեկուցագիրն աւարտեց Կառմանը հետեւեալ խօսքերով: «Եթէ Վիլհելմ Բ. կարծում է որ քրիստոնէական—սոցիալականութիւնը յիմար բան է, մենք յոյս ունենք ժամանկով ապացուցանելու նրա խորին նշանակութիւնը տէրութեան բարգաւաճման համար... Կառմանը նից յետոյ խօսեց Բեռլինի պրօֆեսոր և քարոզիչ Բարոն Սոգէն. «ընկերական գործունէութեան հոգեւոր պաշտօնեաների, նրա իրաւունքներն ու սահմաններն, ճառախօսի կարծիքով եկեղեցին մեծ դեր ունի ընկերական խնդիրների մշակութեան մէջ, Այս ծրագրով ընթանալով ճառախօսը խոստանում է եկեղեցու համար համակրութիւն վաստակել միլիոնաւոր ժողովրդների մէջ, եթէ գրանով եկեղեցու պաշտօնեայք անհաճելի անգամ լինին վերին տասն հազարին (ազնուականներին), Բացի այս ճառից բազմաթիւ զեկուցագրեր կարդացուեցաւ գործնական ուղղութեամբ:

— Գերմանական եկեղեցական թերթերից մի քանիսն այս տարուան սկզբից առանձին եռանդով պաշտպանում են հալածուած հայերին, այս խնդրի համար գովելի է մանաւանդ „Christliche Welt“ շաբաթաթերթի ջանքերն, որի իւրաքանչիւր համարում մի պաշտպանողական յօդուած կայ հալածուած քրիստոնէից համար, նոյն թերթն և ժողովարարութիւններ է ձեռնարկել հայոց օգտին, որի արդիւնքը տասնեակ հազար մարդի է հասնում: Մի այլ առթիւ առաջ կը բերենք այդ թերթի հայոց նուիրած յօդուածների ցանկն. առ այժմ յիշենք միայն մի զլիաւոր հարցումն, որ նոյն թերթի մէջ կարդում ենք. «Ի՞նչու Վիլհելմ կայսրն մի զօրաւոր պաշտպանողական խօսք չստաց հայոց համար, մի նման հարցումն տալիս է յայտնի աստուածաբան Բայշլադ պրօֆեսորն մի այլ թերթում. «Ինչո՞ւ մինչև այսօր գերմանական Ռայխստագում մի համակրական խօսք կամ հարցումն չեղաւ հայոց համար»:

Այս երկու հարցումներին կարծես պատասխան է վերջերս Կրէտէի առթիւ Բիսմարկի բերան

Համբուրգի լրագրի մի յօդուածը, որի մէջ նա յայտնում է, որ Գերմանիայի հոգը չէ ամենեւին թէ թուրքերն ու կրեւացիք միմիանց կը կոտորեն, Գերմանիան շահ չունի կրեւեւում, ուստի բոլոր կրեւացիների թափած արիւնն չարժէ մի գերմանացի առողջ նաւաստու ոսկրին, Յակամայից հաստատել պէտք է պրօֆ. Բայշլադի այն խօսքը՝ թէ գերմանացի սպաները թուրքի բանակը կը թել են, որ անգէն քրիստոնէից արիւնը թափել կարողանան, եթէ այդպէս մտածէին միւս քրիստոնեաներն ևս անշուշտ բաժան բաժան եղած և ոտքի տակ տրորուած Գերմանիան այսօր մեծ պետութիւն չէր լինիլ, բայց փափք Աստուծոյ, որ բոլոր քրիստոնէից սիրտն երկամից չէ, ինչպէս երկամի կանցլէրի սիրտն:

(3 - ին մայիսի:

Ն. Բարամանց.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ — ՊԵՏՄԵԿԱՆ.

ՈՂԲ ԽԱՉԱՏՐՈՅ ԿԵԶԱՌԱԴՈՅՆ.

ՎԷԱՄ ՆՇԽԱՆԱՅՆ. *

Ձայն ահագին աւուրս, որ հասաց,
Ժամանակիս որ պատահեցաց,
Ձեռքդը Արարիչն դառնացուցաց,
Ձերկիրս արեամբ մեղաւք ներկեցաց,
ՁՄայրն Աստուծոյ մեր տրտմեցուցաց,
Ձմեռ քարեխաւսն քարացուցաց,
Հեկեղեցեաց դուռնս փակեցաց,
Ձկանոնական գիրն մոռացաց,
Մեք մեր ծնուաւք մեզ դարիմ եղաց,
Հայհոլութեամբ գեքրանս լցաց,
Թանգեղձ շարիքս շաղախեցաց,
Հաւազանին խորհուրդն ուրացաց,
Ձկերակին սուրբ ոչ պահեցաց
Այլ շար գործաւք մեր պատառեցաց
Ձժամս եւ զաղաթս քնաւին մոռացաց
Ի պատարագն անգամ ընայեցաց
Ձոմիւ հաւտին քամբասեցաց,
Վարդապետաց հակառակ կացաց,
Ձհարս եւ զմայրս վիրաւորեցաց,
Ձազգ եւ զազինս ի մէջ վարեցաց,
Ձողորմութեան դուռն փակեցաց,
Ձորքն եւ զայրին անյազ դատեցաց,
Ձխաւս եւ զհաղորդն զարացուցաց,
Ձեկեղեցին սուրբ քամահեցաց,
Ժաղը եւ նախատ քազմաց մեք եղաց,

Յերկաթ եւ ի նեղ զնդան մեք մտաց,
Թաղքատութիւնս որ ժամանեցաց,
Այս մեծ դարիս որ հանդիպեցաց,
Ի ծնուն շար ազգի գրաւեցաց,
Բժիշկ շունինք ցաւիս որ դիպաց,
Ձմեռ քարեքարն անյայտ կորուսաց,
Եւ այլ շունինք իսկի մեզ ծարակ,
Խիստ արժանի էաց զինչ եղեաց,
Վասն շարեացն որ մեք գործեցաց,
Ազնեան մեզ ի նեղութեան մերում
Աստուած աղաչեմք:

Մեռան իշխանն մեր ցանկալի,
Ու իւրեանց որդիքն ի տղայ հասակի.
Մուգն տիրեաց մեզ իսրայէլի,
Հալ է՝ աղաղակն մեծ հուքելի,
Սաղոն սիրած մեծ Ապղանի,
Գոված ընտիր յամէն հանդիսի,
Ձաշնդը քան զինչ Դամասկոսի,
Տես՝ զգաւառն ի յերբմանի.
Ձեկեղեցիքս ի մեծ վտանկի
Ու զքահանայքս ի տարտարոսի,
Ձիտութլու Բուշայի յարեան հալակի,
Ձիւր աննման պատկերն ի մոխրի,
Ձարքայն շիշիւմ յիշել զՎաղի,
Ձատլաս երեսն Դեմետրէի,
Որ դեռ քրտունքն ի վայր կուլալի,
Սիրտն քաշած ու դեռ կենդանի,
Ձպարոն Պոռն քաղաք յեծելի,
Որ զերկաթի դուռն տանէր փռի,
Անու քաղուկ էր նոր սկոնի
Հիւսն հաստատ Հայոց հաւատի.
Եւ զիւր որդիքն զարմանալի
ՁՄկէմ, զՎասակ զկործնեցն առիւծի,
Ձայն զաւրաւորն ի պատերազմի
ՁԱմիր Հասան քաղուկն քալի,
ՁՏաքսայի՞մ զարմն վեհազգի,
Ձեղբայր մեծին որ Սմբատ կոչի,
Որ պատուեցան ի դուռն արքունի,
Այժմ որ անունն էր Մանուկ Հանի,
ՁՀասանն յիշեմ զտաշնեցի,
Որ մականունն էր Հալալ Դաւի,
Ձմիւս Հասանն, զորդի Դօփի,
Ձհաւատարիմս եւ զերկիւղալի.
Հայնք ունդնակ էր ինքն յատենի
Քան զՔրիստոսի նշանն ի քմերի:
Աւախ թէ զորն ասեմ ի լալի
Ձայն ինչ ու նորին ի գերեզմանի,
Վայ զմացորդս սուտ կենդանի
Մակար չէաց ծնեալ յաշխարհի,
Արդ գերեցաց ու խիստ արժանի
Մեր գերեզարծին չն ի մեծի
Ազնեանմեզ ի նեղութեան մերում
Աստուած աղաչեմք:



* Տես Գանձարան հմբ. 167. գրուած Զփե. (1466)
թուին. ՅԱՐԵՆԻԷ. (Թ. ՃԻՅ.)